ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլի հանրային կարծիքի մինչ այժմ անցկացված ամենաընդգրկուն հարցման, մարդիկ տեսնում են, որ կոռուպցիայի հետ կապված իրավիճակը վատանում է, բայց նրանք պատրաստ են ներգրավվել դրա դեմ պայքարում

Երևան, 9 դեկտեմբերի, 2010 թ.: – Ողջ աշխարհով մեկ 10 հարցվածներից վեցը գտնում է, որ կոռուպցիան նախորդ երեք տարիների ընթացքում աճել է, և յուրաքանչյուր չորրորդը նշել է, որ ինքը նախորդ տարի կաշառք է տվել: Սրանք են Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր (ԿՀԲ) 2010-ի տվյալները: Այն կոռուպցիայի վերաբերյալ ողջ աշխարհով մեկ անցկացված հանրային կարծիքի ուսումնասիրություն է, որի արդյունքները Թրանսփարենսի Ինթերնեշնլը (ԹԻ) ներկայացնում է այսօր՝ Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրը:

Կոռուպցիայի վերջին տարիների միտումների վերաբերյալ առավել բացասական արտահայտվել են Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում. այնտեղ հարցվածների համապատասխանաբար 73 և 67 տոկոսի կարծիքով վերջին երեք տարիներին կոռուպցիան աճել է:

Չնայած այսպիսի մտահոգիչ տվյալների, հարցումը ցույց է տվել նաև, որ 10 հարցվածներից 7-ը կհայտներ համապատասխան մարմիններին իրեն հայտնի կոռուպցիոն դեպքի մասին, սակայն երբ հարցվողներն են ներքաշված լինում կոռուպցիոն գործարքներում, ապա այդ թիվը կիսով չափ նվազում է:

«Ֆինանսական ճգնաժամի հետևանքները շարունակում են ազդել կոռուպցիայի վերաբերյալ մարդկանց կարծիքի վրա, մանավանդ Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում: Պետական հաստատությունները պետք է ավելի վճռական լինեն իրենց ջանքերում՝ վերականգնելու արդյունավետ կառավարումը և վստահությունն իրենց նկատմամբ,- նշում է տիկին Հյուգետ Լաբելը՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլի նախագահը, և ավելացնում,- քաջալերում է այն, որ այսքան շատ մարդիկ պատրաստ են դուրս գալ ընդդեմ կոռուպցիայի: Այսպիսի պատրաստակամությունը պետք է ունենա մոբիլիզացնող ազդեցություն:»

ԿՀԲ 2010-ի հարցումն ընդգրկել է ավելի քան 91,000 մարդ աշխարհի 86 պետություններում և տարածաշրջաններում: Հետազոտության ուշադրության կենտրոնում էին մանր կաշառակերությունը, հանրային հաստատությունների նկատմամբ ընկալումները և այն հարցը, թե ում են մարդիկ առավել շատ վստահում կոռուպցիայի դեմ պայքարում:

Որպես առավել կոռումպացված ընկալվում են կուսակցությունները

ԿՀԲ 2010-ի շրջանակներում հարցվողներին խնդրել են կարծիք հայտնել իրենց երկրների մի շարք առանցքային հաստատությունների և ոլորտների կոռումպացվածության վերաբերյալ: ԹԻ-ն ընտրել էր 11 առանցքային հաստատություն և ոլորտ. Աղյուսակ 1-ում բերված են այդ հարցի վերաբերյալ ամփոփ տվյալները: Գլոբալ մասշտաբով առավել կոռումպացված են ընկալվում կուսակցությունները, որոնց կոռումպացված կամ ծայրահեղ կոռումպացված է համարում հարցվածների 79 տոկոսը: Կուսակցություններին հաջորդում են պետական պաշտոնյաները և քաղաքացիական ծառայողները (62 տոկոս) և խորհրդարանները (60 տոկոս): Աղյուսակ 1-ից երևում է, որ կուսակցություններն ընկալվում են որպես ամենակոռումպացված կառույց 8 տարածաշրջաններից 6-ում: Բացառություն են կազմում «ԱՊՀ+» և «Անդրսահարյան Աֆրիկա» տարածաշրջանները,[1] որտեղ որպես ամենակոռումպացված կառույց ընկալվում է ոստիկանությունը: Ընդ որում, «ԱՊՀ+» տարածաշրջանում ոստիկանությանը հաջորդում են դատական համակարգը և պետական պաշտոնյաները/քաղաքացիական ծառայողները:

Մանր կաշառակերություն. տարածաշրջանային տարբերությունները նշանակալից են

Ըստ ԿՀԲ 2010-ի, ողջ աշխարհում ընդհանուր առմամբ մանր կաշառակերության ծավալները մնացել են անփոփոխ: Էլ ավելի տխուր պատկեր է ստացվում, երբ համեմատությունն անցկացվում է ըստ առանձին հաստատությունների/ծառայությունների: Այս դեպքում կարելի է փաստել, որ մանր կաշառակերության զգալի աճ է արձանագրվել դատական համակարգի, ոստիկանության և կադաստրային և լիցենզիաներ ու թույլտվություններ տրամադրող մարմինների հետ շփվելիս: Ողջ աշխարհում ԿՀԲ 2010-ի հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում կաշառք է տվել համապատասխան հաստատությունների/ծառայությունների հետ շփում ունեցած հարցվողների 27 տոկոսը, ընդ որում, ըստ տարածաշրջանների առավել բարձր է այդ տոկոսն «Անդրսահարյան Աֆրիկայում» (56 տոկոս), «Մերձավոր Արևելքում+Հյուսիսային Աֆրիկայում» (36 տոկոս) և «ԱՊՀ+»-ում (32 տոկոս): Գլոբալ առումով այստեղ առաջատարը ոստիկանությունն է (31 տոկոս), որին հաջորդում են կադաստրի և լիցենզիաներ և թույլտվություններ տվող հաստատությունները (22 տոկոս) և դատական համակարգը (16 տոկոս):

Հարցումը ցույց է տվել, որ վերջին 12 ամիսներին 4 հարցվածներից 1-ը վճարել է կաշառք հարցման մեջ նշված 9 հաստատություններից կամ ծառայություններից (ինչպիսիք են, օրինակ, կրթությունը, առողջապահությունը կամ հարկային մարմինները) որևէ մեկին:

Առավել հաճախ կաշառք տրվել է ոստիկանությանը. համաձայն հարցման տվյալների, ոստիկանության հետ շփում ունեցած հարցվողների մոտ 30 տոկոսը նշել է այդ փաստը:

Առավել մտահոգիչ է հանդիսանում այն փաստը, որ 2006 թ.-ի համեմատ ոստիկաններին կաշառք տվածների թիվը համարյա կրկնապատկվել է: Բացի այդ, 2006 թ.-ի համեմատ ավելի շատ մարդիկ են սկսել կաշառք տալ դատական մարմիններին, կադաստրին և լիցենզիաներ և թույլտվություններ տրամադրող մարմիններին:

Ամենից շատ կաշառք տալիս են Անդրսահարյան Աֆրիկայի բնակիչները: Վերջին 12 ամիսներին այնտեղ կաշառք է տվել հարցվածների ավելի քան կեսը: Այլ տարածաշրջանների ցուցանիշներն են. Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա - 36 տոկոս, ԱՊՀ երկրներ – 32 տոկոս, Լատինական Ամերիկա - 23 տոկոս, Արևմտյան Բալկաններ և Թուրքիա - 19 տոկոս, Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան – 15 տոկոս, և Եվրամիություն և Հյուսիսային Ամերիկա - 5 տոկոս:

Կաշառք տված հարցվածների համարյա կեսը նշել է, որ իրենք կաշառք են տվել, որպեսզի խուսափեն պետական պաշտոնյաների հետ խնդիրներ ունենալուց: Կաշառք տվածների մեկ քառորդը կաշառք է տվել գործընթացներն արագացնելու նպատակով:

Հարցման մեջ ընդգրկած ավելի քան 20 երկրներում մանր կաշառակերության ծավալները 2010 թ.-ին (2006 թ.-ի համեմատ) զգալիորեն աճել են: Աֆղանստանում, Կամբոջայում, Կամերունում, Իրաքում, Լիբերիայում, Նիգերիայում, Պաղեստինում, Սենեգալում, Սիեռա Լեոնեում և Ուգանդայում հարցվածների ավելի քան կեսը վերջին 12 ամիսներին վճարել է կաշառք:

Կաշառակերությունը և աղքատությունը

Կաշառակերությունը շարունակում է ավելի շատ վնասել աղքատներին և երիտասարդներին: Ինչպես և նախկին հարցումների ժամանակ, այժմ էլ ավելի ցածր եկամուտ ունեցողներն ավելի հաճախ են կաշառք վճարում, քան՝ ավելի բարձր եկամուտ ունեցողները: Կոմունալ ծառայությունների և կրթության համար ավելի աղքատ մարդկանց կողմից կաշառք վճարելու հավանականությունը մոտ երկու անգամ ավելի մեծ է, քան ավելի հարուստների կողմից:

Երեսուն տարեկանից ցածր տարիքի հարցվողներից յուրաքանչյուր երրորդը նշել է, որ ինքը վերջին 12 ամիսներին կաշառք է տվել, սակայն 51-ից տարեկանից բարձր տարիքի հարցվողների միայն մեկ հինգերորդն է կաշառք տվել:

Վստահության պակաս պետական պաշտոնյաների նկատմամբ

Դժբախտաբար, գնալով ավելի քիչ մարդիկ են վստահում իրենց իշխանություններին կամ քաղաքական գործիչներին: Հարցվածների մոտ 80 տոկոսը գտնում է, որ կուսակցությունները կոռումպացված են կամ ծայրահեղ կոռումպացված: Իրենց կոռումպացվածության աստիճանով կուսակցություններին հաջորդում են պետական ծառայությունը և խորհրդարանները:

ԿՀԲ 2010-ի արդյունքների համաձայն, իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերն ընդդեմ կոռուպցիայի հանրությունը շարունակում է համարել անարդյունավետ: Այդպես է կարծում հարցվածների համարյա կեսը, և միայն 29 տոկոսն է գտնում, որ այդ պայքարն արդյունավետ է: Կոռուպցիայի դեմ պայքարում իրենց երկրների իշխանությունների ձեռնարկած քայլերից առավել հիասթափված են «Եվրամիություն+» և «Հյուսիսային Ամերիկա» տարածաշրջանների երկրները՝ հարցվողների համապատասխանաբար 74 և 73 տոկոսը: «ԱՊՀ+» տարածաշրջանում այդպես է կարծում հարցվածների 46 տոկոսը: Այսպիսի համեմատաբար ցածր չափաքանակը հիմնականում պայմանավորված է Վրաստանում, Բելառուսում և Ադրբեջանում արձանագրված բավականին ցածր տոկոսներով: Մասնավորապես, Վրաստանում կոռուպցիայի դեմ իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերը անարդյունավետ է համարել հարցվողների ընդամենը 12 (երկրորդ արդյունքն հարցման մեջ ընդգրկված երկրների թվում), իսկ Ադրբեջանում և Բելառուսում՝ 26 տոկոսը:

ԿՀԲ-ի արդյունքները Հայաստանում

ԿՀԲ 2010-ի հարցումը Հայաստանում անցկացվել է 2010 թ.-ի հունիսի 10-ից 20-ը՝ սոցիոլոգիական հարցումներ և մարկետինգային ուսումնասիրություններ իրականացնող ռուսական հայտնի Ռոմիր հոլդինգի[2] կողմից, որը Գելափ Ինթերնեշնլի[3] պաշտոնական գործընկերն է Ռուսաստանում: Հարցման ընտրանքը կազմել է 1,000 տնային տնտեսություն, որպես հարցման ձև ընտրվել է հեռախոսային հարցումը: Հարկ է նշել, որ Հայաստանն ընդգրկվում է ԿՀԲ-ի մեջ երկրորդ տարին անընդմեջ, իսկ ավելի վաղ ԿՀԲ հարցումներում ՀՀ-ն ընդգրված չէր ընդհանրապես:

Հայաստանին վերաբերող տվյալները ամփոփ ներկայացված են սույն հաղորդագրության Հավելվածում զետեղված աղյուսակներում[4]: Տարածաշրջանային համեմատությունների հետ կարելի է ծանոթանալ ԿՀԲ 2010-ի զեկույցում, որն այսօր առավոտյան տեղադրվեց ԹԻ-ի վեբ-կայքում (www.transparency.org):

Հարցվողների ուղիղ կեսի կարծիքով հանրապետությունում վերջին երեք տարիների ընթացքում կոռուպցիայի մակարդակն աճել է, և միայն 15 տոկոսն է գտնում, որ այն նվազել է, իսկ ըստ մնացած 35 տոկոսի՝ կոռուպցիան մնացել է նույն մակարդակի վրա (տես Աղյուսակ 2): Ընդհանրապես, «ԱՊՀ+»-ը աշխարհի պայմանականորեն սահմանված ութ տարածաշրջաններից առավել “լավատեսորեն” տրամադրվածն է: Այստեղ հարցվածների միայն 45 տոկոսն է գտնում, որ կոռուպցիան վերջին երեք տարիներին աճել է, այն դեպքում, երբ «Եվրամիություն+» տարածաշրջանում այդպես է կարծում հարցվածների 73 տոկոսը: «ԱՊՀ+» տարածաշրջանում է գտնվում ԿՀԲ 2010-ի “ամենալավատես” երկիրը՝ Վրաստանը: Այստեղ հարցվածների միայն 9 տոկոսն է կարծում, որ վերջին երեք տարիներին կոռուպցիան երկրում աճել է, այն դեպքում, երբ ըստ 78 տոկոսի՝ այն նվազել է:

Հայաստանում, դատելով Աղյուսակ 1-ում բերված տվյալներից, որպես ամենակոռումպացված ոլորտ ընկալվում է կրթության համակարգը՝ իրենից ետ թողնելով

երկրորդ-երրորդ տեղերը կիսող ոստիկանությանը և դատական համակարգին: Ուսումնասիրելով ԿՀԲ 2010-ի Զեկույցում բերված Աղյուսակ 1-ի լրիվ տարբերակը՝ կարելի է դիտարկել այս ոլորտի հետ կապված այլ մտահոգիչ փաստեր ևս: Առաջինը, հարցված համարյա ոչ մի երկրում կրթական համակարգը չի ընկալվում որպես ամենակոռումպացված ոլորտ, և երկրորդ, ոչ մի երկրում նշված համակարգը այդքան «բարձր միավոր» չի հավաքել (4.2), որքան Հայաստանում (գնահատման սանդղակը 1-ից 5-ն է, որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես չկոռումպացված, իսկ 5-ը՝ լիովին կոռումպացված)[5]: Մեկ այլ ահազանգ է նաև այն, որ, համեմատելով Հայաստանի ԿՀԲ 2010-ի տվյալները նախորդ տարվա հետ այն բոլոր հաստատությունների/ոլորտների համար[6], որոնք ընդգրկված են եղել և՛ այս, և՛ նախորդ տարվա հարցումներում, կարելի է արձանագրել, որ այս տարի համարյա բոլոր հաստատությունները/ոլորտները ավելի կոռումպացված են ընկալվել, քան նախորդ տարի: Միակ բացառությունը լրատվամիջոցներն են, որոնց կոռումպացվածության ընկալման աստիճանը մնացել է անփոփոխ:

Համաձայն Աղյուսակ 3-ի, Հայաստանում հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում կաշառք է տվել հաստատությունների/ծառայությունների հետ շփում ունեցած հարցվողների 22 տոկոսը: Այստեղ հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ տեղի է ունեցել կաշառատվության կտրուկ անկում: 2009թ.-ին հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում կաշառք էր տվել հաստատությունների/ծառայությունների հետ շփում ունեցած հարցվողների 43 տոկոսը:

Հայաստանում կոռուպցիայի դեմ իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերը համարել է անարդյունավետ հարցվողների 53 տոկոսը, իսկ արդյունավետ՝ 27 տոկոսը: Մնացած 20 տոկոսի կարծիքով ոչինչ չի փոխվել: Այս առումով կարելի է համարել, որ Հայաստանը գրանցել է որոշակի հետընթաց նախորդ տարվա համեմատ, քանի որ անցյալ տարի իշխանությունների քայլերն անարդյունավետ էր համարել հարցվողների 48, իսկ արդյունավետ՝ նրանց 38 տոկոսը:

---

[1] ԿՀԲ 2010-ում ընդգրկված 86 երկրները պայմանականորեն խմբավորվել են ըստ 8 տարածաշրջանների: Դրանք են՝ «Եվրամիություն+», որում Եվրամիության անդամ երկրների հետ միասին ներառված են նաև Իսլանդիան, Նորվեգիան և Շվեյցարիան, «Հյուսիսային Ամերիկան», «Անդրսահարյան Աֆրիկան», «Արևմտյան Բալկաններ+Թուրքիան», «Լատինական Ամերիկան», «Ասիախաղաղօվկիանոսյան» տարածաշրջանը, «Մերձավոր Արևելք+Հյուսիսային Աֆրիկան» և «ԱՊՀ+»-ը, որի մեջ ԱՊՀ երկրների հետ միասին ներառված է նաև Մոնղոլիան:

[2] Նույն այս ընկերությունը ԿՀԲ 2010-ի շրջանակներում հարցումներ է անցկացրել նաև Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում և Լատվիայում:

[3] ԿՀԲ 2010-ի հարցման անցկացումը ԹԻ-ն պատվիրել է Գելափ Ինթերնեշնլին, որն այն անցկացրել է իր տեղական պաշտոնական գործընկերների միջոցով:

[4] Հաղորդագրության Հավելվածում բերված աղյուսակները ներառում են համապատասխան հարցի վերաբերյալ գլոբալ, տարածաշրջանային և «ԱՊՀ+» տարածաշրջանի հարցման մեջ ընդգրկված բոլոր երկրների, ներառյալ Հայաստանի, ինչպես նաև Թուրքիայի, տվյալները: Վերջինս ընդգրկված է «Արևմտյան Բալկաններ+Թուրքիա» տարածաշրջանում:

[5] Միայն Թուրքիայում է կրթական համակարգը բիզնես/մասնավոր հատվածի և պետական պաշտոնյաներ/քաղաքացիական ծառայողների հետ կիսում է առաջինից երրորդ տեղերը որպես առավել կոռումպացված ընկալվող ոլորտներ/հաստատություններ, ընդ որում այն գնահատվել է 3.3, որը զգալիորեն ավելի լավ արդյունք է, քան Հայաստանինը:

[6] Այդ հաստատություններ/ոլորտներ են կուսակցությունները, խորհրդարանը, բիզնես/մասնավոր հատվածը, լրատվամիջոցները, պետական պաշտոնյաները/քաղաքացիական ծառայողները և դատական համակարգը:

Հավելված

Աղյուսակներ ըստ երկրների/տարածքների

Տարածաշրջանային դասակարգում

Ասիա-Խաղաղ օվկիանոսյան տարածաշրջան	ԵՄ+	Լատինական Ամերիկա	Մերձավոր Արեւելք եւ Հյուսիսային Աֆրիկա	Հյուսիսային Ամերիկա	ԱՊՀ պետություններ+	Անդրսահարյան Աֆրիկա	Արեւմտյան Բալկաններ և Թուրքիա
Աֆղանստան	Ավստրիա	Արգենտինա	Իրաք	Կանադա	**Հայաստան**	Կամերուն	Բոսնիա-Հերցեգովինա
Ավստրալիա	Բուլղարիա	Բոլիվիա	Իսրայել	ԱՄՆ	Ադրբեջան	Գանա	Խորվաթիա
Բանգլադեշ	Չեխիա	Բրազիլիա	Լիբանան		Բելառուս	Քենիա	Կոսովո
Կամբոջա	Դանիա	Չիլի	Մարոկո		Վրաստան	Լիբերիա	Մակեդոնիա
Չինաստան	Ֆինլանդիա	Կոլումբիա	Պաղեստին		Մոլդովա	Նիգերիա	Սերբիա
Ֆիջի	Ֆրանսիա	Սալվադոր			Մոնղոլիա	Սենեգալ	Թուրքիա
Հոնկոնգ	Գերմանիա	Մեքսիկա			Ռուսաստան	Սիերա Լեոնե	
Հնդկաստան	Հունաստան	Պերու			Ուկրաինա	Հարավաֆրիկյան Հանրապետություն	
Ինդոնեզիա	Հունգարիա	Վենեսուելա				Ուգանդա	
Ճապոնիա	Իսլանդիա					Զամբիա	
Հարավային Կորեա	Իռլանդիա						
Մալայզիա	Իտալիա						
Նոր Զելանդիա	Լատվիա						
Պակիստան	Լիտվա						
Պապուա Նոր Գվինեա	Լյուքսեմբուրգ						
Ֆիլիպիններ	Նիդերլանդներ						
Սինգապուր	Նորվեգիա						
Սողոմոնյան Կղզիներ	Լեհաստան						
Թայվան	Պորտուգալիա						
Թաիլանդ	Ռումինիա						
Վանուատու	Սլովենիա						
Վիետնամ	Իսպանիա						
	Շվեյցարիա						
	Մեծ Բրիտանիա						

Աղյուսակ 1. Ձեր ընկալմամբ, ի՞նչ չափով են կոռուպցիայի ազդեցությանը ենթարկվել տվյալ երկրի հետեւյալ հաստատությունները/կառույցները (1-ընդհանրապես կոռումպացված չեն, 5-լիովին կոռումպացված են): Միավորների միջինը

Երկիր/տարածք	Կուսակցություններ	Խորհրդարան/օրենսդիր իշխանություն	Ոստիկանություն	Բիզնես/մասնավորհատված	Լրատվամիջոցներ	Պետական պաշտոնյաներ/քաղաքացիական ծառայողներ	Դատական համակարգ	ՀԿ-ներ	Կրոնական մարմիններ	Զինված ուժեր	Կրթական համակարգ
Ընդամենը	4.2	3.7	3.7	3.4	3.2	3.7	3.3	2.9	3.3	2.8	3.1
Ասիա-Խաղաղ օվկիանոսյան տարածաշրջան	4.2	3.8	3.7	3.6	3.4	3.9	3.1	2..9	3.8	3.2	3.5
ԵՄ+	4.4	3.5	3.1	3.5	3.4	3.5	3.4	2.8	3.5	2.7	2.6
Լատինական Ամերիկա	4.0	3.7	3.3	3.5	2.9	3.7	3.8	2.9	2.9	2.9	2.9
Մերձավոր Արեւելք եւ Հյուսիսային Աֆրիկա	3.6	3.3	3.2	2.9	2.6	3.4	2.9	2.5	2.5	2.4	2.6
Հյուսիսային Ամերիկա	4.1	3.8	3.1	3.5	3.3	3.5	3.2	2.8	3.2	2.7	2.8
Անդրսահարյան Աֆրիկա	3.9	3.8	4.4	2.8	2.5	3.6	3.5	2.9	2.4	2.2	2.6
Արեւմտյան Բալկաններ և Թուրքիա	3.9	3.7	3.3	3.4	2.9	3.6	3.7	2.7	2.4	2.4	3.3
Թուրքիա	3.2	2.9	3.1	3.3	3.0	3.3	3.1	3.0	2.5	3.2	3.3
ԱՊՀ պետություններ+	3.7	3.7	3.9	3.3	3.0	3.8	3.9	2.9	2.2	3.1	3.6
Հայաստան	***3.6***	***3.8***	***4.1***	***3.2***	***2.9***	***3.8***	***4.1***	***2.7***	***2.2***	***3.6***	***4.2***
Ադրբեջան	2.6	2.5	3.6	2.6	2.4	3.3	3.2	2.5	1.9	2.6	3.3
Բելառուս	3.2	3.2	3.6	3.2	3.1	3.8	3.4	2.9	2.2	2.9	3.2
Վրաստան	2.9	2.6	2.1	2.4	2.4	2.7	2.9	2.2	1.4	1.8	2.2
Մոլդովա	3.8	3.7	4.1	3.7	3.0	3.8	3.9	2.9	2.4	2.9	3.7
Մոնղոլիա	4.2	4.2	4.0	3.0	2.9	3.6	4.1	2.5	2.1	2.9	3.7
Ռուսաստան	3.5	3.6	3.9	3.4	3.2	3.9	3.7	3.1	2.5	3.5	3.7
Ուկրաինա	4.0	4.1	4.3	3.7	3.2	4.1	4.4	3.2	2.3	3.5	4.0

Աղբյուր. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2010. Թվերը վիճակագրորեն կշռված են: Գունանշված միավորները տվյալ երկրի համար ամենաբարձրն են:

Աղյուսակ 2. Անցած 3 տարիների ընթացքում ի՞նչ փոփոխություն է կրել կոռուպցիայի մակարդակը տվյալ երկրում:

Երկիր/տարածք	...նվազել է	...մնացել է նույնը	...ավելացել է
Ընդամենը	14%	30%	56%
Ասիա-Խաղաղ օվկիանոսյան տարածաշրջան	15%	38%	47%
ԵՄ+	3%	24%	73%
Լատինական Ամերիկա	11%	37%	51%
Մերձավոր Արեւելք եւ Հյուսիսային Աֆրիկա	16%	27%	57%
Հյուսիսային Ամերիկա	5%	28%	67%
Անդրսահարյան Աֆրիկա	24%	14%	62%
Արեւմտյան Բալկաններ և Թուրքիա	16%	27%	57%
Թուրքիա	26%	17%	57%
ԱՊՀ պետություններ+	17%	38%	45%
Հայաստան	***15%***	***35%***	***50%***
Սրբբեջան	28%	20%	52%
Բելառուս	24%	49%	27%
Վրաստան	78%	13%	9%
Մոլդովա	12%	35%	53%
Մոնղոլիա	7%	20%	73%
Ռուսաստան	8%	39%	53%
Ուկրաինա	7%	63%	30%

Աղբյուր. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2010: Թվերը վիճակագրորեն կշռված են

Աղյուսակ 3. Ծառայություններ ստացած հարցվածների տոկոսը, ովքեր անցած 12 ամիսների ընթացքում կաշառք են տվել՝ 9 տարբեր ծառայություն մատուցողներից առնվազն մեկին

	Տոկոսը
Ընդամենը	27%
Ասիա-Խաղաղ օվկիանոսյան տարածաշրջան	18%
ԵՄ+	5%
Լատինական Ամերիկա	23%
Մերձավոր Արեւելք եւ Հյուսիսային Աֆրիկա	36%
Հյուսիսային Ամերիկա	5%
Անդրսահարյան Աֆրիկա	56%
Արեւմտյան Բալկաններ և Թուրքիա	19%
Թուրքիա	33%
ԱՊՀ պետություններ+	32%
Հայաստան	***22%***
Ադրբեջան	47%
Բելառուս	27%
Վրաստան	3%
Մոլդովա	37%
Մոնղոլիա	48%
Ռուսաստան	26%
Ուկրաինա	34%

Աղբյուր. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2010. Տոկոսները վիճակագրորեն կշռված են: Թվերը հաշվված են այն հարցվողների համար, ովքեր շփվել են թվարկված ծառայություններ հետ եւ կաշառք են թվել ծառայություն մատուցողներից որեւէ մեկին:

Աղյուսակ 4. Ինչպե՞ս կգնահատեիք կոռուպցիայի դեմ պայքարում Ձեր երկրի ներկա իշխանությունների ընթացիկ գործունեությունը:

Երկիր/տարածք	Ոչ արդյունավետ	Ոչ մեկը	Արդյունավետ
Ընդամենը	50%	21%	29%
Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան	44%	33%	23%
Եվրամիություն+	74%	0%	26%
Լատինական Ամերիկա	32%	28%	40%
Մերձավոր Արեւելք եւ Հյուսիսային Աֆրիկա	50%	22%	28%
Հյուսիսային Ամերիկա	73%	0%	27%
Անդրսահարյան Աֆրիկա	45%	11%	44%
Արեւմտյան Բալկաններ և Թուրքիա	54%	11%	35%
Թուրքիա	40%	1%	59%
ԱՊՀ պետություններ+	46%	23%	31%
Հայաստան	***53%***	***20%***	***27%***
Ադրբեջան	26%	9%	66%
Բելառուս	26%	35%	39%
Վրաստան	12%	11%	77%
Մոլդովա	52%	30%	18%
Մոնղոլիա	53%	28%	19%
Ռուսաստան	52%	22%	26%
Ուկրաինա	59%	24%	16%

Աղբյուր. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2010. Թվերը վիճակագրորեն կշռված են: Տոկոսների գումարը կարող է 100% չկազմել, քանի որ տոկոսները կլորացված են: